

Տ Ա. Թ Ե Ի

Բ Ն Ն Գ Ի Ռ Ի Թ Ի Ի Ն.

Սահմանները.—Տաթևը նախկին Ծղկայ գաւառի վերջին, այսինքն արևելահարաւային մասն է։ Նրա սահմանները կազմել են արևմուտքից՝ Լորաձորը, հարաւից և արևելքից՝ Բաղքը, իսկ հիւսիսից՝ Հաբանգը։ Ինչպէս հին ժամանակներում, նոյնպէս և այժմ Տաթևը իւր շրջակայ ընդարձակ կալուածներով թէև ոչ քաղաքական, բայց և այնպէս՝ աշխարհագրական մի առանձին միութիւն է կազմում. սրան մանաւանդ նպաստում է նրա աշխարհագրական դիրքը, —նա մի գետահովիտ է, ձգուած հարաւից դէպի հիւսիս։

Լեռներ.—Սա ներկայացնում է մի հարթ բարձրաւանդակ, որի հիւսիսային և արևմտեան կողմերը գրեթէ ուղղահայեաց իջնում են մինչև Որոտնայ գետի ափը, իսկ արևելեան և հարաւային կողմերում, Լորաձորի սահմաններում, ձգւում է մի լեռնաշղթայ, որ մտնելով Սիսիան՝ մօտենում է Ելլիճու շղթային։ Այս շղթայի մէջ ամենաբարձրը Գաղբէլն է (10550), որի մօտ Ղամբէլը միայնակ կանգնած է, որ 8918 ոտ. բարձրութիւն ունի և գտնւում է Տաթևի վանքի արևմտահարաւային մասում։ Միւս բարձր գագաթը՝ Մեչետիւն է, վանքից դէպի հիւսիս, 8433 ոտ. բարձրութեամբ։ Սրա մօտ նշանաւոր են Պետրոսախաչ լեռը (6717) և Սուլուլ-քարը, իսկ Ղամբէլի մօտ՝ Զրբէրան (7535) և Խաչ-քար (7947), ինչպէս և Պաղաբերդ, Թէաք-սարը և Կիրիմիր-գաղը։

Գետեր.—Ղամբէլից մի փոքրիկ գետակ սկիզբն առնելով հոսում է քարհանքի մօտով, որի անունով և կոչւում է Քրհանոնց գետ։ Գաղբէլից էլ մի ուրիշ գետակ սկիզբն առնելով անցնում է Աղանձ աւերակ գիւղի միջով և նրա անունով կոչւում Աղանձու գետ։ Այս երկու գետակները միախառնւում են Հարանց անապատի մօտ։ Տանձուտում սրանց հետ միանում է Ջրուռանի գետակը, որ սկիզբն է առնում Օրդուխաներ բլուրներից։ Այս երեքն էլ թափւում են Որոտնայ գետը։

Սատանի կամհւրջ.—Տաթևից արևելահիւսիս, Հարանց մեծ անապատից փոքր ինչ բարձր, գտնւում է Սատանի կամուրջը, բնութեան հրաշալիքներից մինը։ Որոտնայ գետի շրջակայքին, կարմիր, ահագին ժայռերը գալով գալով նեղանում են, և այնտեղ, ուր այժմ կամուրջն է, մօտ 100 սաժ. լայնութեան անցք կազմում։

Ահա այդ անցքը ծածկուած է կրային բազալթութեան ահագին քարերով, որոնց տակից անցնում է Որոտնայ գետը և փոփրալից ալիքներով նորից վայր թափւում, յորձանքներ կազմում ու գնում հեռանում։

Այս ահագին քարերի տակ երևում են զանազան ձևի և մեծութեան ստալակտիտներ, որոնք մի քանի արշին երկարութեամբ կախ են ընկած ջրի երեսին։ Սրանք մի քանի աստիճաններով կամարներ են կապում, որոնցից ամենաներքինը կանաչ գոյն է ստացել, իսկ միւսները գեղնաւուն են։

Ընդհանրապէս կարծւում է, որ այս Սատանի-կամուրջը յառաջացել է կրային ջրի գարեւոր զանգուածներից, որ հետզհետէ սնդացել է։

Ջրանցքներ.—Տաթևի շրջանում գտնւում է Վարարակի ջրանցքը։ Հարանց անապատի գրեթէ հանգէպ, Որոտնայ գետի ձախ ափին, գէպի հիւսիս ձգուած մի լանջ կայ, որի հողը կոշտ և քարախառն լինելով՝ միմիայն փշի թփեր էր բուսցնում, այդ պատճառով էլ այդ տեղը Յաքուտ էր կոչւում, (ցաք նշանակում է փուշ)։ 932 թուին Տաթևի վանահայր Յակոբ եպիսկոպոսը 12,000 զրամի և մի պատուական գո-

Հարի առել է Զագեձորի կամ Վարարակի ջուրը և բաւական մեծ ծախսեր անելով բերել մինչև այս ծաքուտ կոչուած տեղը, որի շնորհիւ այստեղ ոչ թէ ցաքեր, այլ վարդեր են բուսել, և տեղն էլ Վարդուտ է կոչուել: Նոյն Յակոբ Եսլիսկոպոսը այստեղ գեղեցիկ այգիներ է ձգել, որոնց մէջ տնկել է խաղողի որթեր, ձիթենիներ, թզենիներ, նռնենիներ և ամենայն տեսակ պտղատու ծառեր: Եետոյ այդ տեղ մի գեղեցիկ բլուր տեսնելով Հարթել է նրա գագաթը, պարսպով պատել և շինել մի գեղեցիկ դիտանոց, որ նալում էր բոլոր այգիների վրայ: Բլրի գլխին շինել է «գմբեթայարի խորան մի յով Հրաշակերտ յօրինուածովք, և զորմ և զձեղուն նորա ետ զարգարել նկարչաց զանազան երանգօք, նկարել զամենայն տնօրինական և տէրուկական պատկերս և զառաքելոց և զՀայրապետաց, և բոլոր շուրջ գեկեղեցեաւն սրահակս գաւթաց» (Օրբ. գլ. ԽԹ.): Սրբեւեանի յիշած այս գեղեցիկ բլուրը գտնուում է ծաքուտից քիչ ներքե, մի փոքրիկ տափարակի մէջ տեղը: Նրա գագաթին այժմ էլ կանգնած է յիշեալ փոքրիկ եկեղեցին, որ կիսաւեր դուրսեան մէջ է: Բլրակի չորս կողմում կան կիսաւեր շինութիւններ, որոնք հաւանօրէն եղել են նախկին սրահազարդ գաւթիները:

Այս գեղեցիկ ձեռակերտը ժամանակով հնանալով կարիք է եղել վերանորոգելու: Եւ ահա Եոհաննէս արքեպիսկոպոսը՝ վերանորոգել է նրան և Զագեձորի ու Տաթևի մէջ եղած մի ժայռի լանջին, որը ճեղքելով անց է կացրել ջուրը՝ արձանագրել է իւր այս գործը այսպէս.

Եամի յորում էր թվ. ՉԽԱ (1292) ես Տր
Եոհաննէս կամաւն Այ եւ աղթիք հոգեւոր հոր ի-
մոյ Տր Հայրապետի տարայ գջուրս Վարարական
աւարտումն (?) զոր ածապատիւ հոգեւոր Տր
Եակոբ զնեալ եւ տարեալ էր քաղում աշխա-
տութեամբ եւ արդեամբք. զխափանեալն ի քա-
ղում ժամանակաց կրկին նորոգեցաք. յիշատակ

մեզ եւ նախնեաց մերոց, որք հանդիպեք սը Նորորդութեան յիշեցէք՝ ի Լու:

Այս ջրանցքին ժողովուրդը «Քեշիշ-արխ» է կոչում և աւանդաբար պատմում, թէ մի քահանայ է շինել, երբ ջուրը հասել է վերոյիշեալ արձանագրութիւնը կրող ժայռին, և երբ տեսել են, որ ոչ ժայռի ներքևից և ոչ բարձրից կարող է ջուրը անց կենալ՝ քահանան բացազանչել է. «Ինչ ահագին ժայռ է: Եւ իսկոյն ժայռը մէջտեղից երկուսի է ճեղքուել: Մօտի մշակը այս տեսնելով՝ տեսել է.

—Տէրտէր, ինչ լու աչք ունիս...

Եւ հէնց այս ասելուն պէս՝ քահանայի աչքն էլ տրաքուել է:

Այժմ այս ջրանցքը դարձեալ քանդուած է և նախկին վարդապետը դարձեալ ծաքուտ է մնացել:

Հանքային ջրեր.—Ամենից նշանաւորը Սատանի կամուրջի մօտ գտնուած կրկաթաջուրն է, որ առատութեամբ գուրս է ցալտում Տաթևի սարի լանջից: Առաջները Տաթևի վանահայրը այստեղ մի աւազան էր շինել և շատ հիւանդներ գալիս օգտուում էին. բայց երբ Որոտնայ գետը բարձրանալով, սկսեց Սատանի կամուրջի վրայով անցնել՝ քչեց տարաւ և այս աւազանը: Այնուհետև թէպէտ գետը նորից իջաւ և արդէն բաւական ժամանակ է, որ դարձեալ կամուրջի տակովն է անցնում՝ սակայն այլ ևս ուշադրութիւն դարձնող չկայ այս հրաշալի հանքային ջրի վրայ, որ բոլորովին ապարդիւն կերպով թափւում է գետի մէջ: Այստեղից փոքր ինչ բարձր, գետի ուղղութեամբ, մի նեղ և սաստիկ վտանգաւոր կածան տանում է գէպի մի ուրիշ հանքային (երկաթային) ջրի լողարան, որ շինուած է մի սարսափելի, գետի վրայ կախ ընկած ապառաժի կրճքի վրայ և հաւաքում է իւր մէջ երեք առատ հանքային աղբիւրներ: Սա «ճգնաւարի բաղանիք» է. կոչւում, որովհետև այնպիսի մի տեղ է գտնուում, ուր միայն իւր գլխից ձեռք վեր առած ճգնաւորը կարող է գնալ: Այս ամառ (1897 թ.) մի կին և մի տղամարդ այդտեղ բարձրանալիս՝ գլորուել են ներքև և գետի մէջ խեղդուել:

Ո՛չ պակաս նշանաւոր է և Ուրուտ (Որոտ) թրքարնակ գիւղում գտնուած երկաթաջուրը, որ հաւաքուած է մի աւազանի մէջ: Սրանից գոնէ, տեղացիները բուսական օգտուած են: Գոյնը մամ մմ նշանակող նշանակող տեսակով:

Կլիման.—Տաթևի լեռնադաշտի կլիման ընդհանրապէս բարեխառն խոնավ է. ամառը հով է, ձմեռը բարեխառն, բայց երբեմն սաստիկ ցուրտ, թէպէտ ոչ այնքան՝ ինչպէս Ուշ-Թափալարի հարթութեան վրայ, որ նրանից 7—8 վերստ հեռու է գտնուած: Այստեղ այնքան լաճախ և սաստիկ են լինում փոթորիկները, որ Տաթևի և Գորիսի մէջ գրեթէ երեք ամիս շարունակ հաղորդակցութիւնը կտրուում է, որովհետև ճանապարհը այստեղով է անցնում:

Օգոստոսի երկրորդ կեսից սկսած մինչև ապրիլի վերջը այս Ուշ-Թափալարի հարթութիւնից սառն քամի է փչում զէպի Տաթևի բարձրաւանդակը, իսկ տարուայ միւս ժամանակներում փչում են հարաւային տաք և խոնավ քամիներ:

Տարուայ ընթացքում այստեղ անձրևալին և ամպամած օրեր աւելի են լինում, քան թէ պարզ: Շատ անգամ գարնանը և ամառը, Արաքսի կողմերում մշուշ է բարձրանում. անցնում է Զանգեզուրի գաւառի անտառները և ամբողջ շաբաթներով շրջապատում Տաթևն ու շրջակայ լեռները և կամաց-կամաց մաղւում: Այս տեսակ եղանակը շատ անգամ վնասում է հասկերին:

Զիւնը երևում է նոյեմբերին. գետերը սառչում են գետեմբերին, իսկ սառուցից ազատուած մարտի վերջին: Սակայն ձիւնը երկար չէ մնում. 2—4 օրից հալչում է, իսկ լեռների լանջերին ու գագաթներին մնում է մինչև ամառ: Պտղատու ծառերից կեռասենին, ալուշան (АЛЫЧА) և վալրի նուշը (ДИКИЙ МИНДАЛЬ) ծաղկում են սովորաբար ապրիլի սկզբին *):

Բուսականութիւն.—Տաթևը շատ հարուստ է բուսական-

*) Село Татевъ. Сбор. мат. для опис. жѣст. и племень Кавказа, вып. 13.

նութեամբ: Ունի մի քանի փոքրիկ անտառակներ, բաւական թուով այգիներ, որ գլխաւորապէս տարածւում են Որոտնար գետի ափին, արտեր և գեղեցիկ արօտատեղիներ:

Անտառակներում գտնւում են նաև բոխի (*Carpinus*), *Betulus*, грабовое дерево), հաճարկի (*Fagus silvaticus*, букъ), թխկի (*Acer platanoides*, кленъ), հացիկի (ясень), արջածառ (рябина), ոգնի-եմշան (*Crataegus oxyacantha*, боярышникъ), Թփերից նշանաւոր են ցրտնին (*juniperus*, можжевельникъ), ճապկէ (*Viburnum opulus*—ալաժահրի, калина), թրղի (карадаванникъ), նարինջափայտ (сараганъ), կոծախուրի (*Berberis vulgaris*, барбарисъ), մոշի (*Rubus fruticosus*, ежевика).

Այգիներում աճում են խնձորենի, տանձենի, ընկուզենի, խոզակաղնի, թթենի, հոնի ծառ և սալորենի: Նշանաւոր է մանաւանդ թուփը, որ բաւական մեծ և քաղցր է լինում:

Արտերում ցանում են գլխաւորապէս՝ զանազան տեսակի ցորեն, գարի, հաճար, ոսպ, կանեփ:

Արօտատեղիներում, բացի սովորական խոտերից և ծաղիկներից, բուսնում է և լուածաղիկ, բայց տեղացիները չգիտեն նրան շահագործել, թէև իսկապէս շատ մեծ պահանջ կայ:

Կենդանիներ.—Անտառներում լինում են նապաստակներ, եղնիկներ, այծեամներ, աղուէսներ, գալլեր և սակաւ արջեր:

Թռչուններ.—Բազմազան թռչուններից նշանաւոր են մարահաւ, կաքաւ, դռն, աղունիկ, մշահաւ, տաթրակ և այլն: